ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 21 դեկտեմբերի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին
դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ռ.. Պապայանի

Քննության առնելով Արմեն Համամջյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Արմեն Համամջյանը 16.11.2007թ. դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ կետի և 160-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների սահմանադրականությունը:

Դիմումի և կից փաստաթղթերի, ինչպես նաև վիճարկվող օրենսդրական դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ նրա կողմից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ կետի վկայակոչման ընթացքում որոշակի շփոթություն է տեղի ունեցել, իրականում խոսքը վերաբերում է 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1-ին, 2 և 5-րդ կետերի, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը միջնորդում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի (է) կետի հիմքով իրեն ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Դիմումատուն, Սահմանադրական դատարանին ներկայացնելով ընդհանուր իրավասության դատարաններում քննության առնված իր գործի փաստական հանգամանքները, փորձել է հիմնավորել, որ իր իրավունքները խախտվել են առաջին և վերաքննիչ ատյանի դատարանների կողմից դատաքննության ընթացքում վերջիններիս կողմից բավարար հետևողականություն և գործնականություն չդրսևորելու պատճառով: Մասնավորապես, նա իր դիմումի մեջ նշում է, որ վերաքննիչ դատարանի դատավորը մերժել է պարտավորեցնել քաղաքապետարանին իրեն ուղարկել 22.07.2007թ. դիմումի պատասխանը, կամ որ դատարանի կողմից իր նկատմամբ կիրառված իրավունքը եղել է «ամբողջովին սխալ» և անհիմն: Դիմումի մեջ տեղ են գտել նման բնույթի այլ պնդումներ:

4. Դիմումատուի կողմից հիմնավորումներն ու փաստարկներն ամբողջությամբ վերաբերում են իրավունքի կիրառման հարցերին, վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցի առաջ քաշումն ունի զուտ ձևական բնույթ, որը չի ուղեկցվել որևէ հիմնավորմամբ. իրականում դիմումատուն վիճարկում է ընդհանուր իրավասության դատարանների կայացրած դատական ակտերի օրինականության հարցը:

Ցանկանալով Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների 1-ին մասերի հետ վիճարկվող դրույթների հակասության փաստի վերաբերյալ լրացուցիչ հիմնավորում բերել, դիմումատուն որպես այդպիսին ներկայացնում է այդ դրույթների հակասությունը ոչ թե Սահմանադրության վերոնշյալ հոդվածների, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մեկ այլ դրույթի՝ 90-րդ հոդվածի 3-րդ մասի հետ:

Սահմանադրական դատարանն իր պրակտիկայում արդեն բազմիցս նշել է, որ Սահմանադրական դատարանի ընդդատությունից դուրս են իրավունքի կիրառման, որ նույնն է, թե դատական ակտի օրինականության գնահատման հարցերը: Ինչպես նշել է Սահմանադրական դատարանն իր ՍԴԱՈ-668 որոշման մեջ «...Դիմողը նորմի հակասահմանադրականության որևէ փաստարկ չի ներկայացնում, այլ առաջ է քաշում այդ նորմի կիրառման պարագայում դատարանների վճիռների հիմնավորվածության խնդիրը, որի գնահատումը Սահմանադրական դատարանի իրավասության մեջ չի մտնում»:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4 և 7-րդ կետերով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Ա. Համամջյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 160-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների սահմանադրականությունը վիճարկելու մասին, չընդունել քննության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՐՏՈՒՂՂ-ԲՈՒԹՅՈՒՆ